


# ՅԱԿՈՒՔ ՕՇԱԿԱՆ ԱՆՆԱՆ ՎԱՐՊԵՏԸ

Posted on December 9, 2013 by Keghart



Category: [Opinions](#)



✖ 11 Դեկտեմբեր 2013

**Սոյն գրութիւնը ստացանք բարեկամէ մը, սակայն հեղինակն ու գրութեան աղբիւրը չկրցանք պարզել, հետեւաբար հեղինակին անուան փոխարէն առայժմ պիտի գրենք «Անանուն»: Կ'ենթադրենք թէ գրութեան թուականն է 2013, նկատի առնելով այն փաստը որ «Անանուն» կը նշէ. «Մահազդը հրատարակուած է 65 տարի առաջ»: Կը խնդրենք մեր ընթերցողներէն որ եթէ ծանօթ են հեղինակին, բարի ըլլան մեզ տեղեակ պահել: (Խմբ.)**

✖ 11 Դեկտեմբեր 2013

**Սոյն գրութիւնը ստացանք բարեկամէ մը, սակայն հեղինակն ու գրութեան աղբիւրը չկրցանք պարզել, հետեւաբար հեղինակին անուան փոխարէն առայժմ պիտի գրենք «Անանուն»: Կ'ենթադրենք թէ գրութեան թուականն է 2013, նկատի առնելով այն փաստը որ «Անանուն» կը նշէ. «Մահազդը հրատարակուած է 65 տարի առաջ»: Կը խնդրենք մեր ընթերցողներէն որ եթէ ծանօթ են հեղինակին, բարի ըլլան մեզ տեղեակ պահել: (Խմբ.)**

«Գեղարդ» Նամականի

12 Դեկտեմբեր 2013

Բարեւ Սիրելիներ,

Օշականի մասին կարճ ակնարկը ինծի կը պատկանի: Չայն լոյս ընծայած էի երկու ամիս առաջ՝ Facebook-ի Aleppo Armenians կայքէջին մէջ:

Լեւոն Շառոյեան

Անանուն, 2013

Այս մահազդը հրատարակուած է 65 տարի առաջ՝ գուժելու համար Յակոբ Օշականի մահը: Այդ օրերուն, Օշական Երուսաղէմէն Հալէպ եկած էր ժամանակաւորապէս՝ խոյս տալով Պաղեստինի հրեա-արաբ բախումներուն ստեղծած վտանգաւոր մթնոլորտէն:

Հալէպցիք սիրով շրջապատած էին Օշականը, մեծարած էին զինք հրապարակաւ, կարելիութիւններ ստեղծած՝ որ արեւմտահայ մեծանուն քննադատը հանգիստ եւ ուրախ զգայ ինքզինք այստեղ:

Ոչ ոք կրնար մտածել սակայն, որ Հալէպը պիտի դառնար Մեծ Հիւրին վերջին հանգստարանը...: Օշական իր աչքերը յաւիտենապէս փակեց ու գնաց թաղուիլ մեծանուն հայասերի մը՝ Քարէն Եփփէի շիրիմին ճի՛շդ կողքին, Հալէպի հայոց ազգային գերեզմանատան մէջ:...

Ամբողջ Հալիւալը լացաւ Օշականին համար: 20.000 յուղարկաւորներ քալեցին իր դագաղին ետեւէն...: Ս. Քառասուն Մանկանց եկեղեցւոյ մէջ, յետ յուղարկաւորութեան արարողութեան, դամբանականներ խօսեցան [Չարեհ Սրբազան, Խորէն Եպս. Բարոյեան](#) (յանուն Կիլիկիոյ կաթողիկոսին) եւ Շահան Պերպերեան: Իսկ գերեզմանատան մէջ դամբանախօսեցին



«Յառաջ»ի խմբագրապետ Շաւարշ Միսաքեան (այդ օրերուն կը գտնուէր Հալիւայ) եւ Անդրանիկ Ճառուկեան:

Յակոբ Օշական, անկասկած, Հալիւայի ազգ. գերեզմանատան մէջ թաղուած մեծագոյն դէմքն է...: Բարի սովորութեամբ մը՝ երեսուն տարիէ ի վեր Ճեմարանականներ Թարգմանչաց Տօնին միջտ կ'այցելէին իր շիրիմին ու կ'ոգեկոչէին զինք: Երկու տարիէ ի վեր սակայն, Հալիւայի պատերազմական դէպքերը զինք ալ մոռցուցին, ան մնաց առանց այցելուի...:

Խո՛ւնկ եւ աղօ՛թք իր շիրիմին:

**Հետագային երկուքն ալ բազմեցան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական գահին: (Խմբ.)**

